Ավետիք Իսահակյան

Մայրի՛կ, նայիր, արևն ինչպես

- Մայրի՛կ, նայիր, արևն ի՞նչպես
Դեղնել է, ցուրտ է ի՞նչպես.
Լույս չի տալիս, ու նայի՛ր, տես՝
Չորս դիս՝ դալուկ աշնան պես:
Եվ սար ու ձոր՝ լուռ – սևավոր,
Անտառ, առու սուգ կանեն:
Գարուն օրով այս ի՞նչ ցավով
Երկիք – երկիր մեռել են:

- Ա՞խ, սիրելիս, դաշտ ու անտառ
Գարնան գրկում նոր ծաղկան:
Վառ արևն էլ, տե՛ս ի՞նչ պայծառ,
Ու ցավ չունին, բալա ջան:
Ավա՛ղ … մենակ սիրտդ է մեռել,
Ու սրտիդ մեջ – ամեն բան.
Սիրո ցավով սիրտդ է մեռել,
Դալար կյանքդ, բալա ջան …

1899
Սարիղամիշ